11030385

ՀԱՆԴԷՍ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԱՌ ՅԻՍՈՒՍ

Ո՛վ Յիսուս, իմ Յիսուս, Յիսուս աստուածեան,
Ի քեզ զիմ կեանս և զմահ առնեմ ապաստան.
Համայն գործոց իմոց պաշտպան լիցիս դուն,
Զինչ և առնեմ եղիցի քո իսկ յանուն։
Ի գնալն իմում՝ ռահ հորդեսցէ քաղցրըդ սէր,
Եւ 'ի նըստելս, քաղցր Յիսուս, կաց առընթեր.
Ուրախութիւն գրեցիս մեծ, մեծ յոյժ հոգւոյս,
Ի գիշերի հըսկել ընդ քեզ, իմն Յիսուս.
Եւ թէ փակին արտեւանունքս 'ի քուն ինչ,
Սակայն ըզսէր քո չընչելով՝ առիս նինջ։
Դու ինձ յուսման՝ քաղցր Յիսուս, լեր վարդապետ,
Եւ 'ի գըրելս՝ շարժիչ մատանցս ետ ընդ ետ.
Ց'ածել 'ի քարտ ըզսայր գրչիս՝ քաղցրասցի
Զպաշտելիդ անդ դրոշմել անուն Յիսուսի։
Եթէ վաստակք ընկճեսցեն զիս եւ թէ վիշտ,
Յիսուս, 'ի սէր քո խնդրեցիս ինձ դիւր միշտ.
Յիսուս լիցի՛մ բըժիշկ՝ թ'եղէց ես հիւանդ,
Ի քէն, Յիսուս, դեղ խնդրեցիս անդ և անդ,
Ի գիրկ քո, քաղցր Յիսուս, յուսամ թէ մեռայց,
Յետին շընչոյս՝ դու ընկալուչ իմ և այց։
Մինչ սեաւ մահուն յիս հասցէ մռայլ անխափան,
Սիրտ քո, Յիսուս, ինձ եղիցի հեշտ տապան.
Եւ յորժամ ցուրտն ածցի զինեւ հոգակոյտ,
Իմ գիր չիրմի՝ անուն եւ խաչ կացցէ քոյդ։

Թարգմանեալ յանգղիականէ.